ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագիրը համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբի նիստի

08.11.2011թ. *ք.Երևան*

Մասնակցում էին՝

Աշխատանքային խմբի ղեկավար՝

Վ.Վարդանյան ՀՀ քաղաքաշինության նախարար

Աշխատանքային խմբի անդամներ՝

Կ.Արեյան Երևանի քաղաքապետի տեղակալ

Ե.Աթայան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության պետ

Ա.Գիլոյան ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ

Ա.Եգանյան ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի փոքր և միջին ձեռնարկատիրության վարչության պետ

Ա.Հայրապետյան ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի մակրոտնտեսական քաղաքականության վարչության պետ

Ա.Մինասյան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ

Ռ. Սուքիասյան ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ

Կ.Խտրյան ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ

Ա.Հարությունյան ՀՀ կառավարությանն առնչվող անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ

Ն.Բաղդասարյան ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ

Գ.Սարոյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ

Աշխատանքային խմբի քարտուղար՝

Ս.Սրապյան ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների բաժնի պետ

Նիստին մասնակցում էին նաև ՀՀ քաղաքաշինության նախարարության բնակարանային քաղաքականության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության բնակարանային ֆոնդի կառավարման և կոմունալ ենթակառուցվածքների բաժնի գլխավոր մասնագետ Գ.Թումանյանը և առաջատար մասնագետ Մ.Խաչիկյանը:

Օրակարգ՝ Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրի իրականացման ժամանակացույցով նախատեսված միջոցառումների կատարման հետ կապված հարցերի քննարկում:

Ե.Աթայանը համառոտ ներկայացրեց Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի N 38 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ Հայաստանի Հանրապետությունում բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) և միջոցառումների իրականացման ժամանակացույցը, հատկապես շեշտելով հետևյալ խնդիրները.

- Հաշվի առնելով, որ Ծրագրի 9-րդ բաժնի միջոցառումների իրականացման ժամանակացույցում ներառված «Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում» և «Իրականացվող բարեփոխումների հանրային իրազեկման և սեփականատերերի իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության ապահովում» միջոցառումների կատարումն ապահովելը 2011 թվականին իրատեսական չէ, անհրաժեշտ է քննարկել նշված միջոցառումների կատարման ժամկետները փոփոխելու հարցը,

- Ծրագրի ժամանակացույցով նախատեսված միջոցառումները արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով, մասնավորապես համապատասխան իրավական ակտեր, ծրագրեր, նախագծեր մշակելու համար Ծրագիրը համակարգող միջգերատեսչական աշխատանքային խմբի համակարգման ներքո աջակցող աշխատանքային խումբ ստեղծելու հարցը,

- միջոցառումների իրականացման համար համապատասխան ռեսուրսներ ներգրավելու նպատակով միջազգային դոնոր կազմակերպությունների հետ բանակցություններ վարելու հարցը,

- Ծրագրի միջոցառումների ժամանակացույցով համապատասխան գերատեսչությունների մասով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների ցանկի, կատարման ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ առաջարկությունների մշակման անհրաժեշտության հարցը:

Քննարկման արդյունքներով որոշվեց՝

1. Սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել «ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 29-ի նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման ժամանակացույցում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ՝ Ծրագրի 9-րդ բաժնի միջոցառումների ժամանակացույցում ներառված «Բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում» ու «Իրականացվող բարեփոխումների հանրային իրազեկման և սեփականատերերի իրավունքների և պարտականությունների մասին տեղեկացվածության ապահովում» միջոցառումների ժամկետները 2012-2013թթ. տեղափոխելու վերաբերյալ,

2. Աշխատանքային խմբի անդամներին՝

- 15-օրյա ժամկետում մշակել և ներկայացնել առաջարկություններ Ծրագրի միջոցառումների ժամանակացույցով իրենց գերատեսչությունների մասով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ աշխատանքների ցանկի, կատարման ժամկետների և ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ,

- ուսումնասիրել գերատեսչություններում առկա փորձը նման ծրագրերի իրականացման կազմակերպչական աշխատանքները կատարելու համար (Իրավական ակտերի, ծրագրերի, նախագծերի մշակում և այլն) աշխատանքային խմբերի ձևավորման և դրանց գործունեության վերաբերյալ և ներկայացնել համապատասխան առաջարկություններ:

3. Բանակցություններ վարել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ՝ ժամանակացույցով համապատասխան գերատեսչությունների մասով նախատեսված միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ ներգրավելու համար:

Աշխատանքային խմբի ղեկավար _____ **Վ.Վարդանյան**

Քարտուղար _____ **Ս.Սրապյան**